ՀԱՎԵԼՎԱԾ 30

«Եվրասիական
տնտեսական միության
մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անդամ պետությունների աշխատավորներին և նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնություն ցուցաբերելու մասին

1. Սույն Արձանագրությունը մշակված է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի XXVI բաժնի համաձայն և կարգավորում է անդամ պետությունների աշխատավորների ու նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնություն ցուցաբերելու հետ կապված հարցերը:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«մշտական բնակության պետություն»՝ պետություն, որի քաղաքացին է պացիենտը.

«բժշկական կազմակերպություն (առողջապահական հիմնարկ)»՝ կազմակերպաիրավական ձևից անկախ իրավաբանական անձ, որը, որպես հիմնական (կանոնադրական) գործունեություն, իրականացնում է բժշկական գործունեություն՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա, կազմակերպաիրավական ձևից անկախ այլ իրավաբանական անձ, որը հիմնական (կանոնադրական) գործունեության հետ մեկտեղ իրականացնում է բժշկական գործունեություն, կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ, որն իրականացնում է բժշկական գործունեություն՝ անդամ պետության օրենսդրությանը համաձայն.

«բժշկական տարահանում»՝ պացիենտի կյանքը փրկելու և առողջությունը պահպանելու նպատակով պացիենտի տեղափոխում (այդ թվում՝ այն պացիենտների, որոնց կյանքին սպառնացող իրավիճակների դեպքում հնարավոր չէ ցուցաբերել անհրաժեշտ բժշկական օգնություն այն բժշկական կազմակերպություններում (առողջապահական հիմնարկներում), որտեղ նրանք գտնվում են, և այն պացիենտների, որոնք տուժել են արտակարգ իրավիճակների և բնական աղետների հետևանքով, ինչպես նաև շրջապատի մարդկանց համար վտանգավոր հիվանդություններով տառապողների).

«պացիենտ»՝ անդամ պետության աշխատավոր կամ նրա ընտանիքի անդամ, որին ցուցաբերվում է բժշկական օգնություն, կամ որոնք դիմել են բժշկական օգնություն ստանալու համար՝ անկախ իրենց մոտ հիվանդությունների առկայության և իրենց վիճակի.

«շտապ բժշկական օգնություն (անհետաձգելի)»՝ բժշկական միջոցների համալիր, որոնք ցուցաբերվում են առանց պացիենտի կյանքին սպառնալիքների նշանների հանկարծակի սուր հիվանդությունների, վիճակների, քրոնիկ հիվանդությունների սրացումների ժամանակ.

«շտապ բժշկական օգնություն (արտակարգ)»՝ բժշկական միջոցների համալիր, որոնք ցուցաբերվում են պացիենտի կյանքին սպառնալիք ներկայացնող սուր հիվանդությունների, դժբախտ պատահարների, վնասվածքների, թունավորումների և այլ վիճակների ժամանակ:

3. Աշխատանքի տեղավորման պետությունն անդամ պետությունների աշխատավորներին և նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնության ցուցաբերումն ապահովում է այն կարգով և պայմաններով, որոնք սահմանվել են աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով:

4. Անդամ պետություններն իրենց տարածքում անդամ պետության աշխատավորներին և նրանց ընտանիքների անդամներին տրամադրում են անվճար շտապ բժշկական օգնության իրավունք (անհետաձգելի և արտակարգ) նույն կարգով և նույն պայմաններով, ինչ աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիներին:

Շտապ բժշկական օգնությունը (անհետաձգելի և արտակարգ) անդամ պետությունների աշխատավորներին և նրանց ընտանիքի անդամներին աշխատանքի տեղավորման պետության պետական ու համայնքային համակարգերի առողջապահական կազմակերպությունների կողմից ցուցաբերվում է անվճար՝ անկախ բժշկական ապահովության վկայականի առկայությունից:

Բժշկական կազմակերպության (առողջապահական հիմնարկի)՝ անդամ պետությունների աշխատավորների և նրանց ընտանիքի անդամներին ցուցաբերված շտապ բժշկական օգնության ծախսերի փոխհատուցումն իրականացվում է աշխատանքի տեղավորման պետության բյուջետային համակարգի համապատասխան բյուջեների հաշվին՝ առողջապահության ֆինանսավորման գործող համակարգին համապատասխան:

5. Պացիենտի կյանքին կամ շրջապատի մարդկանց առողջությանն անմիջական սպառնալիքը վերացնելուց հետո աշխատանքի տեղավորման երկրի բժշկական կազմակերպությունում (առողջապահական հիմնարկում) բուժումը

շարունակելու դեպքում ցուցաբերված ծառայությունների փաստացի արժեքի վճարումն իրականացվում է սակագներով կամ պայմանավորված գներով՝ անմիջականորեն պացիենտի կողմից կամ այլ աղբյուրներից, որոնք արգելված չեն աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ:

6. Պացիենտին մշտական բնակության պետություն բժշկական տարահանում իրականացնելու անհրաժեշտության դեպքում առողջության մասին տեղեկատվությունը բժշկական կազմակերպության (առողջապահական հիմնարկի) կողմից ուղարկվում է մշտական բնակության պետության դեսպանություն և (կամ) լիազոր մարմին (կազմակերպություն):

Պացիենտի բժշկական տարահանման հնարավորությունը, ինչպես նաև բժշկական տարահանման կարգը սահմանվում են անդամ պետության օրենսդրությանը համապատասխան: Բժշկական տարահանումն իրականացվում է շտապ բժշկական օգնության արտագնա բրիգադներով՝ տեղափոխման ժամանակ բժշկական օգնություն ցուցաբերելու միջոցառումներ անցկացնելով, այդ թվում՝ բժշկական սարքավորումներ կիրառելով:

Պացիենտի բժշկական տարահանման ծախսերի փոխհատուցումն իրականացվում է մշտական բնակության պետության բյուջետային համակարգի համապատասխան բյուջեի հաշվին՝ առողջապահության ֆինանսավորման գործող համակարգին համապատասխան, կամ այլ աղբյուրների հաշվին, որոնք արգելված չեն մշտական բնակության պետության օրենսդրությամբ: